ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-450-21.01.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՍԵՐԳԵՅ ԱՏՈՄՅԱՆ	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Քրեական դատավարության մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը սահմանում է, որ դատախազը կարող է վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի անօրինական կամ անհիմն որոշումները, ուստի ելնելով այս կետի մեկնաբանությունից անհրաժեշտություն չկա փոփոխվող հոդվածներում նշել հսկող դատախազի լիազորությունները:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: